



Վ Ե Ի Ռ
Հ Ա Ն ՈՒ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն

26 հոկտեմբերի 2015թ.

ք. Վանաձոր

ՀՀ վարչական դատարանը, հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ դատավոր
քարտուղարությամբ՝
մասնակցությամբ՝
հայցվոր՝

**Արշակ Ալավերդյանի
Արմինե Մարաբյանի**

երրորդ անձ՝

Սիրանուշ Մխիթարյանի
ներկայացուցիչ՝ Արտուր Հարությունյանի
ՀՀ քաղաքաշինության նախարարության
ներկայացուցիչ՝ Դավիթ Դավթյանի

2015թ. հոկտեմբերի 8-ին, դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի՝ Սիրանուշ Խեչանի Մխիթարյանի /հասցեն՝ Լոռու մարզ, գյուղ Արևաշող, անձնագիր՝ AK 0642355, տրված՝ 19.10.2010թ., 052/, ընդդեմ՝ ՀՀ Լոռու մարզպետարանի /հասցեն՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Հայքի հրապարակ/ և ՀՀ քաղաքաշինության նախարարության /հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3/՝ «Անգործությունները ոչ իրավաչափ ճանաչելու և պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին».

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Սիրանուշ Մխիթարյանը՝ 09.10.2014թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, ընդդեմ՝ ՀՀ Լոռու մարզպետարանի /այսուհետ նաև՝ Մարզպետարան/ և ՀՀ քաղաքաշինության նախարարության /այսուհետ նաև՝ Նախարարություն/, խնդրելով՝ 1/ ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ 29.11.2012թ. թիվ 284 հրամանի մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում իրեն չիրազեկելու հետ կապված Նախարարության անգործությունը ճանաչել ոչ իրավաչափ, 2/ ոչ իրավաչափ ճանաչել Լոռու մարզպետի կողմից ցուցաբերված այն անգործությունը, որի արդյունքում մինչև՝ 21.12.2012թ. չի նախապատրաստվել իր հետ ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագրի նախագիծ և դրա կնքման ժամի, օրվա և վայրի մասին իրեն չի ծանուցվել, 3/ պարտավորեցնել Լոռու մարզպետին՝ իր հետ կնքել «Սեկ սենյակի շահառու ճանաչված ընտանիքների հետ ֆինանսական աջակցության տրամադրման մասին» համապատասխան ձևի պայմանագիր:

ՀՀ վարչական դատարանի՝ 16.10.2014թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով գործը նախապատրաստվել է դատաքննության:

Հայցվորը հայցի առարկայի կամ հիմքի փոփոխություն չի ներկայացրել:

Պատասխանողները հայցադիմումի վերաբերյալ գրավոր պատասխան են ներկայացրել:

Գործով երրորդ անձ չի ներգրավվել:

Գործով առանձին ակտի ձևով որոշում է ընդունվել՝ հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը դատաքննության նշանակելու մասին:

Վերադաս դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելու մասին որոշում չի ընդունվել:

2. Հայցի բովանդակությունը.

Սիրանուշ Մխիթարյանը ներկայացրած հայցադիմումով ՀՀ վարչական դատարանին հայտնել է հետևյալը:

1. Հայցի էության հակիրճ նկարագրությունը.

1988թ. երկրաշարժի հետևանքով դարձել է անօթևան, ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ 29.11.2012թ. թիվ 284 հրամանով ճանաչվել է մեկ սենյականոցի շահառու, սակայն ընդունված

*Աջացվել է 5 առջեռն 20.11.2015թ.
Ք. Ասխրաբյան*

